Ենթադրամաշնորհներ ՔՀԿ-ների կոալիցիաներին

(ցանցերին)

Իրազեկման (տեղեկատվական) սեմինար

«ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

Ենթադրամաշնորհներ ՔՀԿ-ների կոալիցիաներին (ցանցերին)

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է տրամադրել 2 տեսակի ենթադրամաշնորհներ ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին (ցանցերին): ՔՀԿ-ների կոալիցիաներին (ցանցերին) ենթադրամաշնորհներ կտրամադրվեն երկու փուլով:

Ծրագրի այս փուլում սկսվել է ՔՀԿ-ների կոալիցիաներին (ցանցերին) տրամադրվող ենթադրամաշնորհների առաջին փուլը:

Ենթադրամաշնորհների առաջին փուլը

Ընդհանուր նպատակ

Ծրագիր թիրախ 9 ՝ **ՀՀ արդարադատության (1), մարդու իրավունքների (2), հանրային ֆինանսների կառավարման (3), բիզնեսի (4), կրթության (5), սոցիալական ոլորտ. հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառման (6), գյուղատնտեսության (7), տնտեսության (8), Էներգետիկայի (9) ոլորտներում** ստեղծել ՔՀԿ-ների կոալիցիաներ (ցանցեր) կամ օժանդակել արդեն գործող ՔՀԿ-ների կոալիցիաներին (ցանցերին)՝ ապահովելով դրանց ազդեցության մեծացումը վերոհիշյալ ոլորտների հանրային քաղաքականությունների մշակման, ջատագովման և այդ գործընթացներում հանրային մասնակցության ապահովման վրա:

Ենթադրամաշնորհների առաջին փուլը

Առանձնահատուկ նպատակ

- Ծրագրի թիրախային ոլորտներից մեկում հանրային կարևորության մեկ ոլորտի առնվազն երկու առանցքային խնդիրների վեր հանում և դրա վերաբերյալ հանրային քաղաքականությունների մշակման, բարելավման և, ջատագովության և մոնիթորինգի իրականացում՝ համագործակցելով ոլորտային նախարարությունների և այլ պետական մարմինների ու դերակատարների հետ՝ ապահովելով այդ գործընթացներում ՔՀԿ-ների մասնակցությունը:
- Իրենց գործունեության ոլորտում առանցքային խնդրի (խնդիրների) շուրջ իրականացնել հանրային քաղաքականությունների ու բյուջեների մոնիթորինգներ և ներկայացնել եզրակացություններ ու առաջարկություններ համապատասխան պետական իրավասու մարմիններին, տիմերին և հետամուտ լինել այդ առաջարկությունների իրականացմանը:

ՈԼՈՐՏ 1. Արդարադատություն

Խնդիրներ.

1.1. Խոցելի խմբերի համար արդարադատության հասանելիության բարելավման անհրաժեշտություն՝ ներառյալ հանրային պաշտպանի ինստիտուտի ուժեղացումը:

1.2. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության բարելավման անհրաժեշտություն:

1.3. Դատական համակարգում էթիկայի վարքագծի բարելավման անհրաժեշտություն:

ՈԼՈՐՏ 2. Մարդու իրավունքներ

Խնդիրներ.

1.1. Խտրականության դեմ պայքարի հանրային քաղաքականությունների մշակման և (կամ) բարելավման անհրաժեշտություն՝ ներառյալ ոլորտի օրենսդրական կարգավորումները և հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծումները:

1.2. Հաշմանդամություն ունեցող անձանց համար համայնքահեն ծառայությունների բարելավման և մշտադիտարկման անհրաժեշտություն՝ ներառյալ ՔՀԿ-ների համար մշտադիտարկման գործիքի բացակայությունը և դրա մշակման անհրաժեշտությունը:

ՈԼՈՐՏ 2. Մարդու իրավունքներ

Խնդիրներ.

1.3. Դատավորների համար հակախտրականության օրենսդրության կիրառման ընթացակարգերի բաելավման անհրաժեշտություն՝ ներառյալ ընթացակարգային ուղեցույցի ընդունման անհրաժեշտությունը:

1.4. Պետական կառույցների կողմից խտրականության դեմ պայքարի ներքին ուղենիշների բարելավում՝առնվազն 3 պետական կառույցներում դրանց ներդրման անհրաժեշտություն:

1.5. Իրավապաշտպանների դեմ սպառնալիքների մշտադիտարկման անհրաժեշտություն:

ՈԼՈՐՏ 3. Հանրային ֆինանսների կառավարում

Խնդիրներ.

1.1. Երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման արդյունավետ մեխանիզմների թույլ մակարդակ ազգային և տեղական մակարդակներում, ինչպես նաև ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոալիցիաների շրջանում: Այդ մեխանիզմների բարելավման, մշտադիտարկման, ջատագովության և դրանցում ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:

1.2. ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ դյուրացված ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում: Այդ մեխանիզմների բարելավման, մշտադիտարկման, ջատագովության և դրանցում ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:

ՈԼՈՐՏ 4. Բիզնես

Խնդիրներ.

1.1. ՓՄՁ ռազմավարության բարելավման անհրաժեշտություն, ՔՀԿ-ների և Բիզնես ասոցիացիաների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ ՓՄՁ ռազմավարության մշակման, բարելավման, մշտադիտարկման և ջատագովության իրականացման գործընթացներում՝ ներառյալ ստորև առանձնացված խնդիրները: ՓՄՁ ռազմավարության մշակման և (կամ) բարելավման, մշտադիտարկման, ջատագովության գործընթացներում ՔՀԿ-ների և Բիզնես ասոցիացիաների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:

ՈԼՈՐՏ 4. **Բիզնես**

Խնդիրներ.

1.2. Գործարարների շահերի պաշտպանի (Բիզնես Օմբուդսմեն) ինստիտուտի ներդրման շուրջ երկխոսության իրականացման անհրաժեշտություն:

1.3. Ձեռնարկատիրական կրթության քաղաքականության բարելավման և իրականացման անհրաժեշտություն՝ ներառյալ սոցիալական ձեռնարկատիրության կրթության ուսումնական ծրագրի մշակումը:

ՈԼՈՐՏ 5. **Կրթություն**

Խնդիրներ.

1.1. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման ու աշխատաշուկայի միջև կապի բարելավման անհրաժեշտություն՝ ներառյալ դրան ուղղված նոր ռազմավարական մոտեցման մշակումը:

1.2. Դպրոցներում կարիերային առնչվող խորհրդատվության համակարգի բարելավման, մշտադիտարկման և ջատագովության անհրաժեշտություն:

ՈԼՈՐՏ 6. Սոցիալական ոլորտ. հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառում

Խնդիրներ.

1.1. Հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառման մշտադիտարկման միջոցով առանցքային խնդիրների գնահատման, հանրային քաղաքականությունների մշակման և (կամ) բարելավման, ինչպես նաև բարեփոխումների իրականացման ջատագովության անհրաժեշտություն:

1.2. Համայնքներում տեղակայված աջակցության կենտրոնների ներդրման բարելավման, մշտադիտարկման և ջատագովության իրականացման անհրաժեշտություն:

ՈԼՈՐՏ 7. **Գյուղատնտեսություն**

Խնդիրներ.

1.1. Խաչաձև՝ էլեկտրոնային գյուղատնտեսության բարելավման և զարգացման անհրաժեշտություն:

1.2. Գյուղատնտեսության ոլորտում կանանց ձեռնարկատիրության, ինչպես նաև նեղ մասնագիտացված շուկաների և օրգանական գյուղատնտեսության զարգացման անհրաժեշտություն:

ՈԼՈՐՏ 7. **Գյուղատնտեսություն**

Խնդիրներ.

1.3. Գյուղատնտեսական կոոպերատիվների համար արդյունավետ կարգավորիչ համակարգի բարելավման և զարգացման անհրաժեշտություն:

1.4. Գյուղատնտեսության շուկայում արդար մրցակցությունն ապահովող քաղաքականությունների բարելավման և ջատագովության անհրաժեշտություն:

ՈԼՈՐՏ 8. Տնտեսություն

Խնդիրներ.

1.1. ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ տեղական աճի ռազմավարություններում և «խելացի համայնք» նախաձեռնություններում, այդ ռազմավարությունների և նախաձեռնությունների բարելավման, ջատագովության, մշտադիտարկման և դրանցում ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:

1.2. Տեղական տնտեսական զարգացման պլանների հաջող իրականացման բարելավման և մշտադիտարկման անհրաժեշտություն:

1.3. ՏԻՄ-երում հանրային կառավարման բարեփոխումների բարելավման, մշտադիտարկման և ջատագովության անհրաժշտություն:

ՈԼՈՐՏ 9. Էներգետիկա

Խնդիրներ.

1.1. Գյուղական կանաչ տնտեսության և մաքուր էներգիայի նախաձեռնությունների բարելավման և մշտադիտարկման, դպրոցներում այս խնդիրների ջատագովության անհրաժեշտություն:

1.2. ՏԻՄ-երի էներգարդյունավետության նախաձեռնությունների մշտադիտարկման և բարելավման անհրաժեշտություն:

1.3. Հանրային աշխատանքների գործընթացում (օրինակ՝ պետական գնումներ) էներգարդյունավետություն ապահովող կանոնակարգերի և կարգավորիչ միջոցների լավագույն փորձի հիման վրա հանրային քաղաքականությունների մշակման և (կամ) բարելավման ու ջատագովության անհրաժեշտություն:

Ենթադրամաշնորհների առաջին փուլը

Կարևոր մեխանիզմների կիրառում

Ծրագրի թիրախ 9 ոլորտներում առանցքային խնդիրների վեր հանումը և դրանց վերաբերյալ ոլորտային հանրային քաղաքականությունների մշակումը և բարելավումը պետք է իրականացնել նաև հետևյալ մեխանիզմների միջոցով.

- «Town Hall» ձևաչափով մեկ համայնքային ժողովի կազմակերպում.
- «Chatham House» ձևաչափով փորձագիտական մեկ աշխատաժողովի կազմակերպում.
- «Ծրագրի թիրախ յուրաքանչյուր ոլորտում ՔՀԿ-Կառավարություն ոլորտային աշխատանքային մեկ խմբի ստեղծում և դրա կողմից ոլորտային հանրային քաղաքականության մշակում:

Ենթադրամաշնորհների առաջին փուլը

Շահառուներ

Ենթադրամաշնորհային ծրագրի հայտ կարող են ներկայացնել **առնվազն չորս ՔՀԿ-ներից բաղկացած կոնսորցիումները՝ ինչպես նոր կոալիցիաներ (ցանցեր) ստեղծելու, այնպես էլ գործող կոալիցիաների (ցանցերի) միջոցով**: Կոնսորցիումի անդամ ՔՀԿ-ները պետք է ունենան **ոչ առևտրային ու ոչ պետական կազմակերպության իրավական կարգավիճակ և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում**: Կոնսորցիումի **առնվազն մեկ անդամ հանդիսացող** ՔՀԿ-ը պետք է մասնակցած և ավարտած լինի Ծրագրի շրջանակներում Հայաստանում Ամերիկյան համալսարանի կողմից ՔՀԿ-ների կարողությունների զարգացման համար կազմակերպված հավաստագրային ծրագիրը:

Ենթադրամաշնորհների առաջին փուլը

Կխրախուսվեն այն ծրագրերը, որոնք.

- ներկայացվել են կանանց և երիտասարդների կողմից ղեկավարվող ՔՀԿ-ների մասնակցությամբ կոնսորցիումների կողմից,
- պարունակում են նորարարական մոտեցումներ և լուծումներ,
- ներկայացվել են մեկից ավելի մարզային (մարզում գրանցված և մարզում գործունեություն ծավալող) ՔՀԿ-ների մասնակցությամբ կոնսորցիումների կողմից:

Մեկ ՔՀԿ-ն, որպես հիմնական հայտատու կարող է ընդգրկված լինել միայն մեկ կոնսորցիումում, իսկ որպես գործընկեր կազմակերպություն կարող է ընդգրկված լինել երկու կոնսորցիումներում, սակայն հաղթող կճանաչվի միայն մեկ անգամ:

Ենթադրամաշնորհների երկրորդ փուլը

Տրամադրման կարգը

Երկրորդ փուլը հայտարարվելու է առաջին փուլի իրականացման 6-րդ ամսում, **որը ոչ մրցութային է փուլ է:** Ենթադրամաշնորհները տրամադրվելու են առաջին փուլում հաղթող ճանաչված այն ՔՀԿ-ների կոալիցիաներին (ցանցերին), ում կողմից իրականացվող ծրագրերը Ծրագրի մասնագետների կողմից **կգնահատվեն արդյունավետ և կապահովեն ծրագրով նախատեսված ընթացիկ արդյունքներ:** Երկրորդ փուլում ենթադրամաշնորհ ստանալու նպատակով Ծրագրի թիմը գնահատելու է առաջին փուլում հաղթող ճանաչված ծրագրերի 1-ից 6-րդ ամիսների իրականացման ընթացքը:

Ենթադրամաշնորհների երկրորդ փուլը

Ժամկետներ

ՔՀԿ-ների կոալիցիաներին (ցանցերին) տրամադրվող ենթադրամաշնորհների երկրորդ փուլը **կմեկնարկվի առաջին փուլի ենթադրամաշնորհների իրականացման 8-րդ ամսում:**

ՔՀԿ-ների կոալիցիաներին (ցանցերին) տրամադրվող ենթադրամաշնորհների երկրորդ փուլի նպատակն է՝ **ուժեղացնել և զարգացնել կոալիցիաների (ցանցերի) ներքին կարողությունները: Առավել մանրամասն տեղեկություններ կտրամադրվի երկրորդ փուլի մեկնարկից առաջ:**

Ենթադրամաշնորհների առաջին և երկրորդ փուլերը

Բյուջե

Ծրագիրը ՔՀԿ-ների կոալիցիաներին (ցանցերին) տրամադրվող ենթադրամաշնորհների առաջին փուլում կօժանդակի մինչև 9 ՔՀԿ-ների կոնսորցիումների՝ ծրագրի 9 թիրախ ոլորտներից յուրաքանչյուրում տրամադրելով 1 ենթադրամաշնորհ **25,000,000 ՀՀ դրամի չափով:**

Երկրորդ փուլում Ծրագիրը կօժանդակի առաջին փուլում հաղթող ճանաչված մինչև 9 ՔՀԿ-ների կոնսորցիումներին, որոնցից յուրաքանչյուրին կտրամադրվի **լրացուցիչ ֆինանսական օժանդակություն՝ մինչև 8,500,000 ՀՀ դրամի չափով:**

Դիմողներից պահանջվում է կատարել գումարային **ներդրում ենթադրամաշնորհային ծրագրին՝ հայցվող ֆինանսավորման 10%-ի չափով:**

Ենթադրամաշնորհների առաջին փուլ

Կարևոր գործողություններ

- Նախքան ծրագրի մեկնարկը՝ մասնակցություն Հայաստանի Ամերիկյան Համալսարանի կողմից կազմակերպված ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանն ուղղված հնգօրյա խորացված հավաստագրային ծրագրին, եթե հաղթող ճանաչված կոնսորցիումի ղեկավարող հիմնական հայտատու և/կամ գործընկեր կազմակերպությունները նախկինում չեն մասնակցել:
- Հաղթող ճանաչված հայտատուները (ենթադրամաշնորհային ծրագրին դիմած կոնսորցիումի ամբողջ կազմը) համաձայնվում են մասնակցել մեկօրյա քննարկման՝ Ծրագրի ներկայացուցիչների հետ՝ ենթադրամաշնորհների իրականացման ընթացքի վերաբերյալ փորձագիտական, այդ թվում՝ ֆինանսական խորհրդատվություն ստանալու նպատակով:

Ենթադրամաշնորհների առաջին փուլ

Ժամկետներ

- Ենթադրամաշնորհային ծրագրերի տևողությունը պետք է լինի 12 ամիս:
- Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018թ. ապրիլի 30-ը, ժամը 18:00-ը:
- Ենթադրամաշնորհի տրամադրման վերաբերյալ որոշումները կընդունվեն 2018թ. մայիսի 18-ին: Հաղթողների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի Ծրագրի կայքում՝ www.ccd.armla.am:
- Հաղթող հայտատուների հետ ենթադրամաշնորհային պայմանագրեր կստորագրվեն 2018թ. մայիսի 31-ին: Դրամաշնորհների իրականացման սկիզբը՝ 2018թ.-ի հունիսի 1-ն է:

Ենթադրամաշնորհների առաջին փուլ

Լրացուցիչ տեղեկություն

- Հայտը ենթադրամաշնորհային ծրագրի կոնսորցումի ղեկավարող կազմակերպության ղեկավարի կողմից ստորագրված և տվյալ ՔՀԿ-ի կնիքով կնքված էլեկտրոնային տարբերակով անհրաժեշտ է ուղարկել info@armla.am էլեկտրոնային փոստի հասցեով՝ նամակի վերնագիրը անվանելով՝ «ՔՀԿ-ների կոալիցիայի (ցանցի) ենթադրամաշնորհային հայտ»:
- Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել Իրավաբանների հայկական ասոցիացիայի դրամաշնորհային հանձնաժողովի նախագահ Արտակ Սարիբեկյանի հետ զանգահարելով +37410 540199 հեռախոսահամարով կամ էլեկտրոնային նամակով՝ info@armla.am հասցեով:

Հայտին կից ներկայացվող փաստաթղթերը

- Ենթադրամաշնորհային ծրագրին դիմող կոնսորցիումի անդամ ՔՀԿ-ների կանոնադրությունների պատճենները.
- Ենթադրամաշնորհային ծրագրին դիմող կոնսորցիումի անդամ ՔՀԿ-ների պետական գրանցման վկայականի պատճենները՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները.
- Յուրաքանչյուր դիմող կազմակերպության մասին հակիրճ (առավելագույնը մեկ էջ) նկարագրություն.
- Ղեկավարող կազմակերպության հարկ վճարողների հաշվառման համարի (ՀՎՀՀ) պատճենը.

Հայտին կից ներկայացվող փաստաթղթերը

- Տեղեկանք բանկից՝ ղեկավարող կազմակերպության բանկային հաշվի առկայության մասին.
- Եթե ենթադրամաշնորհային ծրագրի ղեկավարը ՔՀԿ-ի ղեկավարը չէ, ապա ՔՀԿ ղեկավարի կողմից ծրագրի ղեկավարին տրված լիազորագիրը.
- Ենթադրամաշնորհային ծրագրի իրականացնող հիմնական թիմի անդամների ինքնակենսագրականները.
- Պարտավորագիր-նամակներ՝ կոնսորցիումի անդամ ՔՀԿ-ների կողմից՝ ենթադրամաշնորհային ծրագրի համատեղ իրականացման մասին.

Հայտին կից ներկայացվող փաստաթղթերը

- Առկայության դեպքում՝ Կոալիցիայի ներքին իրավական ակտերի պատճենները (օրինակ՝ Կոալիցիայի ստեղծման մասին փաստաթուղթը, կանոնակարգը, կառուցվածքը, ռազմավարական և կայունության պլանները, մոնիթորինգային պլանը, ինչպես նաև այլ փաստաթղթեր).
- Առկայության դեպքում՝ Հայաստանում Ամերիկյանի համալսարանի կողմից կազմակերպված ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանն ուղղված հավաստագրային դասընթացին մասնակցելու և ավարտելու վկայականի պատճեն:

Ենթադրամաշնորհների գնահատման չափորոշիչներ

Վարչական չափորոշիչներ. *հայտերը սույն չափանիշներին չհամապատասխանելու դեպքում, կարող են չդիտարկվել:*

- Հայտը ներկայացվել է սահմանված ժամկետներում:
- Օգտագործվել է մրցույթի հայտարարությամբ շրջանառված դրամաշնորհային հայտի և դրան կից հավելվածների ձևը (այսուհետ՝ դրամաշնորհային հայտի ձև):
- Դրամաշնորհային հայտի ձևը լրացվել է պատշաճ կերպով:

Ենթադրամաշնորհների գնահատման չափորոշիչներ

Վարչական չափորոշիչներ. *հայտերը սույն չափանիշներին չհամապատասխանելու դեպքում, կարող են չդիտարկվել:*

- Պահանջված ծրագրի բյուջեն համապատասխանում է ծրագրային առաջարկին և չի գերազանցում ներկայացված ծրագրի ընդհանուր բյուջեի 90%-ը:
- Հայտարարությանը համապատասխան՝ ծրագրի տևողությունը չի գերազանցում սահմանված ժամկետը: Դրամաշնորհային հայտի ձևը լրացվել է պատշաճ կերպով:
- Հայտի փաթեթին կցվել են դրամաշնորհային մրցույթի հայտարարությամբ նախատեսված բոլոր փաստաթղթերը:

Ենթադրամաշնորհների գնահատման չափորոշիչներ

Ծրագրային առաջարկի գնահատում.

ԲԱԺԻՆ 1. Ազդեցությունը և նորարարությունը	Ընդհանուր՝ 30 միավոր
Որքա՞ն ազդեցիկ է ծրագրային առաջարկը ԿԵՀ ծրագրի և ենթադրամաշնորհային ծրագրի նպատակների իրականացման տեսանկյունից:	20
Որքանո՞վ է ծրագրային առաջարկը պարունակում նորարարական մոտեցումներ և լուծումներ	10

Ենթադրամաշնորհների գնահատման չափորոշիչներ

Ծրագրային առաջարկի գնահատում.

Ծրագրի նկարագրություն	25 միավոր
Ծրագրի առաջարկում արտացոլվո՞ւմ է արդյոք թիրախավորված խնդիրների վերլուծությունը, հաշվի առնվո՞ւմ են արտաքին գործոնները, ռիսկերը և համապատասխան շահակիցները: Առկա՞ է կապ նպատակի և խնդիրների միջև:	10
Առաջարկի արդյունավետությունը. արդյո՞ք այն իրատեսական է՝ կապված նպատակադրված արդյունքների ձեռքբերման և դրանց հասնելու ժամանակահատվածի հետ:	8
Արդյոք ծրագրային առաջարկը ներկայացվե՞լ է համատեղ՝ կոնսորցիումով, և արդյոք ծրագրի առաջարկում սահմանվա՞ծ են համագործակցող կողմերի հարաբերությունները, դրանց միջև պարտականությունների և լիազորությունների բաժանումը:	3
Արդյոք ծրագիրն իրականացնող թիմը բավականաչա՞փ մասնագիտացված է և արհեստավարժ ներկայացված ծրագրի իրականացման համար:	2
Արդյոք ծրագրային առաջարկը պարունակո՞ւմ է գենդերային հավասարության և հավասար հնարավորությունների ապահովման գործողություններ:	2

Ենթադրամաշնորհների գնահատման չափորոշիչներ

Ծրագրային առաջարկի գնահատում.

Ծրագրի կայունությունը	25 միավոր
Արդյոք հավանակա՞ն է, որ ծրագիրը կունենա շոշափելի ազդեցություն հանրային քաղաքականության և, հետևաբար, նաև դրա թիրախային խմբերի վրա:	15
Արդյոք ծրագրային առաջարկը ապահովո՞ւմ է հայտատուի կայունությունը հետևյալ հարցերում. ❑ ֆինանսական առումով *(ինչպե՞ս են գործողությունները ֆինանսավորվելու ծրագրի ավարտից հետո),* ❑ ինստիտուցիոնալ առումով *(ծրագրի իրականացնողները կշարունակե՞ն գործել ծրագրի ավարտից հետո),* ❑ քաղաքականությունների (եթե ծրագրում առկա է նման գործողություն) մակարդակով *(ի՞նչ տեսակի քաղաքականություններ են մշակվելու ծրագրով, և ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ դրանք հասարակական սեկտորում),* ❑ շրջակա միջավայրի (եթե ծրագրում առկա է նման գործողություն) առումով *(արդյո՞ք ծրագիրը կունենա բացասական/դրական ազդեցություն շրջակա միջավայրի վրա):*	10

Ենթադրամաշնորհների գնահատման չափորոշիչներ

Ծրագրային առաջարկի գնահատում.

Ծրագրի բյուջեն և ծախսերի արդյունավետությունը	20 միավոր
Արդյոք գործողությունները պատշաճ կերպով արտացոլվա՞ծ են բյուջեում:	5
Արդյոք համապատասխանո՞ւմ են միմյանց ծախսերը և գործողությունները, ծախսերը և ակնկալվող արդյունքները:	10
Արդյոք առաջարկվող համաֆինանսավորումը բավարա՞ր և իրատեսակա՞ն է:	5

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ